

2859

Տ Ե Ղ Ե Կ Ա Ք Ի Ր

ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ

Ա. ԱՍՏՈՒԱԺԱԺԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԺԽԱԿԱՆ ԵՐԳԴԱՍԵԱՆ
ԴՊՐՈՅԻ

Հ Ո Ք Ա Բ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ր Ք Ի

1913 — 1916 թվական, հռաժմայ գործունէութեան:

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան Բ. Ղասադեանցի

1916

14419

144/9

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Մեծ-Ղարաբերիսայի Ս. Ստուածածին եկեղեցու և ծխական երկղասեան դպրոցի Հոգաբարձական Խորհրդի 1913—1916 ուսումն. եռամեայ զործունէութեան:

Հոգաբարձական կազմը փառաբանէն ստանձնեց իր պաշտօնը Մայիսի 6-ին 1913 թ.:
Հէնց առաջին քայլից Հոգաբարձական Խորհրդին և Շինարարական Ցանձնախմբին բաժին ընկաւ մի մեծ և դժւարին գործ, որի ի կատար տնելը պահանջում էր նիւթական մեծ միջոց և եռանդի անսպառնելի աղբիւր, որպէսզի հնարաւոր լինէր քիչ-շատ պատւաւոր կերպով պատկել այդ գործը: Բանը նրանում է, որ օրիորդաց դպրոցի շէնքը այրուելուց յետոյ ծխական ժողովը ընտրեց մի յանձնախումբ, որի մէջ մտնում էր և Հոգաբարձական կազմը, դպրոցական նոր շէնք կառուցանելու համար: Մէկ տարի անցնելուց յետոյ արդէն պատրաստութիւններ էր տեսնուում ձեռնարկել նոր շէնքի հանգիսաւոր հիմնարկէքը, որին մասնակցելու հրաւիրւած էին Գեղարատի փոխ-թեմակալն և ուրիշ անձնաւորութիւններ: Այդ ժամանակ Հոգաբարձական Խորհուրդը իրազեկ լինելով, որ Ս. և Ա. Աբովեան եղբայրները իրանց ծնողների յիշատակը յաւերժացնելու համար մտադրութիւն ունեն մի բարի գործ կատարել, արտակարգ նիստ հրաւիրելով, որոշեց անյապաղ պատգամաւորութիւն ուղարկել ներկայանալու պ. Աբովեանին, պարզելով դպրոցի նեղ դրութիւնը և վերջիւ յիշելով պ. Աբովեանների անցեալում ցոյց տւած օգտակարութիւնն ու բարեգործութիւնը դէպի եկեղեցին ու դպրոցը, խնդրել նրանից նւիրարեբել տեղիս հայ եկեղեցուն իրեն պատկանող «Կազարմայ» անւանւած շէնքը ծխական դպրոցի պէտքերին ծառայեցնելու հա-

մար: Պ. Ս. Աբովեանը գիտակցելով, որ իւր հայրենի գիւղի հասարակութեան ոյժից վեր է այն նիւթական մեծ գոհարերութիւնը, որ պահանջում էր հասանակութեան կողմից ձեռնարկելիք նոր շէնքի կառուցումը, ամենայն պատրաստակամութեամբ ընդառաջ եկաւ Սորհրդիս խնդրին, ոչ միայն նւիրելով եղբ, Ս և Ա. Աբովեանների կողմից ի սեփականութիւն եկեղեցու յիշեալ մօտ քառասուն հազար ռուբլի արժողութիւն ունեցող մեծ շէնքը, այլ և ցանկութիւն յայտնելով իւր հաշուով վերանորոգել և յարմարացնել դպրոցական պահանջներին, որ յետագայում իրագործեց: Ահա այսպիսով շնորհիւ պ. պ. Աբովեանների մեծահոգութեանը, հեշտութեամբ լուծւեց այն հանգոյցը, որ դրւած էր թէ հոգաբարձութեան և թէ հասարակութեան առաջ:

Այսօր շնորհիւ Աբովեանների անորակելի բարեգործութեան Հոգաբարձութեանս խնամքին յանձնւած դպրոցն ունի բաւականին յարմար և շքեղ շէնք: Այս պատճառով Հոգաբարձական Սորհուրդը նորից պարտք է համարում հրապարակօրէն յայտնել պ. Ս. և Ա. Աբովեաններին խորին շնորհակալութիւն և անսահման երախտագիտութիւնը այդ մեծ բարեգործութեան համար, որը անմահացրեց նրանց անունը և յաւերժացրեց նրանց հանգուցեալ ծնողների յիշատակը, բանի գոյութիւն կունենայ հայ դպրոցը:

Հոգաբարձութեանս, պաշտօն մտնելու օրից, բաւական ժամանակ խլեց և ոչ սակաւ անախորժութիւններ պատճառեց այն խճճւած գործը, որի անունն է «Ռօտօնդային կից նոր շէնք կառուցանելու հարցը», որը պարզաբանելու և կարգաւորելու համար պահանջեց մեծ ջանք և առնւագն երեք-չորս ամիս այդ հարցին նւիրւեցին այդ ժամանակի ընթացքում բացի հերթական, մի քանի արտակարգ նիստեր:

Նախկին Հոգաբարձական կազմը, բանաւոր կերպով համաձայնութեան գալով տեղիս ակումբի աւագների խորհրդի հետ, պարտաւորւել էր Ռօտօնդի շէնքը մեծացնել, աւելացնելով հինգ սենեակ և այդ շէնքի կառուցանելը յանձնել էր կապալառուներին, որոնց հետ նոյպէս ոչ մի գրաւոր պայման չէր կուել: Հոգաբարձութիւնս իւր պաշտօնը ստանձնելու ժամանակ արդէն համարեայ թէ աւելացրած սենեակները պատրաստ էին, բայց շնորհիւ այն հան-

գամանքի, որ նախորդ Հոգաբարձական կազմը սկսել էր Ռօտօնդային կից կառուցանող նոր շէնքի գործը առանց իր յետնորդ կազմին դեկավարութեան համար իրաւական որ և է փաստաթուղթ թողնելու, Հոգաբարձական Սորհուրդը ընկել էր խիստ դժւարին կացութեան մէջ, գուրկ հնարաւորութիւնից վերականգնել ճշմարտութիւնը, պարզել պայմանագրութեան հիմնական կէտերը: Այդ պատճառով Հոգ. Սորհուրդս ստիպւած եղաւ բաւական ժամանակ վատնել զրա վրայ, բանակցութեան մէջ մտնելով թէ Աւագների Սորհրդի, և թէ կապալառուների հետ, նիստերին հրաւիրելով դրանց և նախկին Հոգաբարձական կազմի անդամներին և այդպիսով միայն հնարաւոր եղաւ բանաւոր պայմանները ճշտելու և վերականգնելու ու վերածելու օրինաւոր գրաւոր պայմանների:

Մենք այստեղ կը բերենք մի ցայտուն փաստ, թէ նախկին Հոգաբարձութիւնը այդ հարցում որքան անտարբեր և անհոգ է եղել: Կապալառուները օգտւելով գրաւոր պայմանի բացակայութիւնից, շինութեան մէջ գործադրել էին եկեղեցապատկան նիւթեր, այն է մէկ գուռ և չորս լուսամտի փեղկեր: Երեցփոխ պ. Յ. Յարութիւնեանը պնդում էր, որ կապալառուները իրաւունք չունէին այդ նիւթերը ձրի գործադրելու և զրա մասին խօսք անգամ չէ եղել: Հոգաբարձութիւնս հարցը պարզելու համար, գրաւոր կերպով զխնեց նախկին Հոգաբարձութեան անդամներին և վերջիններից պատասխան ստացաւ թէ կարգաւորողը և շէնքին վերահսկողը եղել է պ. ԼԵՅՈՒՆ-ը, որը և կարող է պարզել յիշեալ նիւթերի գործադրման խնդիրը: Ապշեցուցիչ է այն, որ հին Հոգաբարձութիւնը, որի խնամքին է յանձնւած եղել դպրոցական գոյքը, որի տէր ու տնօրէնը ինքը պիտի լինի, ոչ մի տեղեկութիւն չունէր, թէ ինչ էր կատարւում նոր շէնքի շուրջը և մատնացոյց է անում իբրեւ գոյքի վերահսկող և այդ գործին գիտակ անձնաւորութեան — ԼԵՅՈՒՆ-ի վրայ, որը ակումբի աւագների խորհրդի նախագահն էր: Սրանից ևս խուսափութեամբ և անորոշ պատասխան ստանալով, Հոգաբարձութիւնս գտնելով, որ կապալառուները ոչ մի իրաւական հիմունք չունէին եկեղեցապատկան նիւթեր ձրի գործադրել առանց Հոգաբարձութեան թոյլտուութեան, մտանագեաների գնահատմամբ 70 ռ. դուրս եկաւ կապալառուների հասանելիք վարձից: Ակումբի աւագ-

ների հետ գրաւոր պայման կոելուց յետոյ, Հոգաբարձութիւնս պատրաստուած էր նոյնը անելու և կապալառուների հետ, երբ վերջինները դիմեցին խորհրդին, առաջարկելով իրանց հասանելիք գումարը, որը հանգցնելու էր մաս-առ-մաս ց 1-ն յուլիսի 1915 թ., վճարել միանգամ այժմ և եթ, գեղջելով վճարելիք գումարից 12% յօգուտ դպրոցի: Խորհուրդս քննելով այդ հարցը եկաւ այն եզրակացութեան, որ կապալառուների առաջարկը շատ օգտաւէտ է դպրոցիս համար նախ՝ որ կապալագիրն կանխիկ վճարելով, դպրոցս շահուած է 253 ռ. 94 կոպ. գեղջիկ, յետոյ, որն ամենից կարևորն է, Ռօտօնդայից ամեն տարի ստացուելիք 600 ռ., որ երեք տարի շարունակ պէտք է յատկացնէր կապալառուների պարաքի շիջուցմանը, մանելու էր դպրոցական կառսան: Հոգաբարձութիւնս ի նկատի ունենալով այդ, օգտագործեց պ. Ս. Եղիգարեանի նւիրաբերած Թիֆլիսի առևտրական բանկում գտնուող 2000 ռ., որը տոկոս էր բերում տարեկան միայն 100 ռ. վեր առնելով այդ գումարը բանկից, վճարելով կապալառուների հասանելիք գումարը, գեղջելով նրանից 12%: Խորհրդիս այդ գործելակերպի շնորհիւ դպրոցական կառսան ամսական 100 ռ. փոխարէն ստացաւ 600 ռ., էլ չենք խօսում 253 ռ. 94 կոպ. գեղջի մասին, որը դպրոցական դատարկ գրամարկի համար մի խոշոր գիւտ էր:

Նախորդ հոգաբարձութիւնը նոյն իսկ հոգ չէր տարել նոր շէնքի յատակագիծը կազմել տալու և օրինական ճանապարհով հաստատելով նահանգական ատեանում. որպիսի թերութիւնը կարող էր բաւական խոշոր անախորժութիւնների տեղիք տալ և նոյն իսկ Ռօտօնդայի փակման պատճառ դառնալ: Ձեռքից ձեռք անցնում էր մի ինչ որ ոչ պաշտօնական յատակագիծ, որը մի օր, երբ արդէն պէտք է կատարէր նոր շէնքի ընդունելութիւնը, անյայտացաւ: Հոգաբարձական Խորհուրդը թիւրիմացութիւններից խուսափելու համար կազմել տւեց յատակագիծ, որ և հաստատուեց յիշեալ ատեանի կողմից: Յատակագիծը և նրա պատճէնը արժեցաւ 38 ռ.:

Հոգաբարձութիւնս իւր պաշտօնը ստանձնելու ժամանակ Հոգաբարձական գրամարկը գտաւ դատարկ և գրամական հաշիւներն ու մուրհակները այնպիսի անկերպարան գրութեան մէջ, որ հրաժարուեց ընդունել մուրհակները երեցփոխ պ. Յարութիւնեան

նից, պարտաւորեցնելով նրան այդ մուրհակները կարգաւորել և ապա յանձնել Հոգ.: Չնայած այն բանին, որ յանձնարարւած էր յիշեալ Յարութիւնեանին կարգի բերել մուրհակները և ստուգել անձեռնամխելի գրամագլխի քանակը, բայց և այնպէս փաստօրէն գրութիւնը մնում էր այնպէս, ինչպէս էր Հոգ. պաշտօն մանելուց առաջ Որովհետև պ. Յարութիւնեանը ոչ մի ձգտում չէր ցոյց աւելի կարգաւորելու մուրհակները: Ահա այդ գրութիւնը շարունակեց մօտաւորապէս 10 ամիս (1914 թ. մարտի 16), որից յետոյ յիշեալ Յարութիւնեանը հրաժարական տւեց: Դրա հրաժարականը ընդունելուց յետոյ միայն հնարաւոր եղաւ ստուգել հաշիւները և կարգի բերել մուրհակները, որպիսի ստուգումը պարզեց հետեւեալը.

Նախորդ Հոգ., ինչպէս երևում է տեղեկագրից, իր նախորդից ստացել էր մուրհակներ 16103 ռ. 65 կ. և պ. Ս. Եղիգարեանի նւիրած 2000 ռ.: Հաշւամատեաններից երևում է, որ բացի այդ գումարից նոյն Հոգ. ստացել է ևս 750 ռ. այն է — պ. Ս. Արովեանից դպրոցների փակման ժամանակ նրան պահ տւած գումարից 500 ռ. և պ. Յարութիւնեանից 250 ռ. զանազան դպրոցական իրերի վաճառումից գոյացած. որպիսի գումարի մասին ոչ մի յիշատակութիւն չկայ թէ նախկին Հոգ. տեղեկագրի մէջ և թէ մուրհակների մատեանում. բայց և այնպէս այդ գումարը գրւած է մատեանում իբրև մուտք: Ուրեմն յիշեալ 750 ռ. վրայ, իբրև անձեռնամխելի գումարի, աւելացնելով 16103 ռ. 65 կ. և պ. Ս. Եղիգարեանի նւիրած 2000 ռ. կ'ստացւի 18853 ռ. 65 կ.

Դրանից պարզ երևում է, որ նախկին Հոգ. իւր տրամագրութեան տակ ունեցել է ոչ թէ 16103 ռ. 65 կ. ինչպէս գրւած է տեղեկագրում, այլ 18853 ռ. 65 կ.:

Յետոյ ըստ նոյն տեղեկագրի առ 1 սեպտ. 1912 թ. անձեռնամխելի գրամագլուխ կար 17053 ռ. 63 կ. Հոգ. ստուգելով մուրհակները և մատեանները գտաւ, որ նախկին Հոգ. մինչև մայիսի 1-ը 1913 թ. գրամագլխից ստացել և ծախսել է 3243 ռ. 32 կ. ուրեմն Հոգ. պէտքէ ստանար իւր նախորդից 14810 ռ. 33 կ. մինչդեռ դա խոշոր սխալ է, որովհետև ինչպէս վերև ասացինք նախկին Հոգ. իսկապէս ստացել է իր նախորդից 18853 ռ. 65 կ. որից

գործադրել է դպրոցի ընթացիկ ծախսերի վրայ 343 ռ. 32 կ. ու-
րեմն իրօք Հոգ. յանձնել է 15610 ռ. 33 կ. բացի 230 ռ. որ ծախ-
սւած է եղել կշեռքի ծածկը շինելու վրայ, թէև այդպիսի շէնք
ներկայ Հոգ. պաշտօնի մէջ մտնելու ժամանակ գոյութիւն չունէր.
բացի այդ, ցոյց է տւած, որ իբր թէ 165 ռ. 74 կ. ծախսել է
սպանդանոցի շինութեան վրայ, այն ինչ այդ գումարը ծախսել է
նախանցեալ Հոգ. ի հաշիւ հասարակական տուրքի: Արդ զրանից
պարզ է, որ խորհուրդս ստացել է իր նախորդից մուրհակներով և
կատարողական թերթերով 15610 ռ. 33 կ. որի մէջ մտնում է և
պ. Ս. Եղիգարեանի 2000 ռ.:

Պատկերը լրացնելու համար այստեղ Հոգ. Խորհուրդը կը բե-
րի նախկին երեցփոխ պ. Յարութիւնեանի գործունէութեան մա-
սին մի քանի հետաքրքրական փաստեր, որոնք երևան հանւեցին
այն ժամանակ, երբ ստուգութեան ենթարկւեց հաշւեմատեանները,
որոնք գտնուում էին պ. Յարութիւնեանի մօտ և վարում էր ինքը
Յարութիւնեանը սկսած 1911—12 թ.թ. մինչև 1-ն մայիսի 1913 թ.:

Առ 1-ն սեպտ. 1912 թ. կասեցւում եղել է առձեռն գրամա-
զուլի 162 ռ. բայց նոր տարեշրջանի մատեանում այդ գումարը
բացակայում է, բացի դրանից մատեանում մուտք չէ գրւած եղել
իր ժամանակին 305 ռ.: Այդ մասին 1913 թ. Յունւարի 20-ին
կայացած ծխական ժողովում գեղուցւում է և պ. Յարութիւնեանը
բացատրում է, որ 305 ռ., նոյնպէս և յիշեալ 162 ռ. ընդամենը 467
ռ., մուտքամբ չէ մտցրել մատեանը, խոստանում է մօցնել իբրև
մուտք: Այնուամենայնիւ այդ գումարը դարձեալ մուտք չէ գրւել
մինչև Ապրիլի 10-ը 1913 թ.: Հէնց այդ ժամանակ ուսուցիչները
պահանջում են մարտ ամսւայ ուճիկը Յարութիւնեանից. սա մերժում
է վճարել, առարկելով թէ դրամարկղում փող չկայ: Ուսուցիչները
հոգաբարձու պ. Աղաբաբեանի հետ զիմում են Խորհրդի նախագահ պ.
Ռոստամեանին, որ ստուգութեան ենթարկելով հաշւեմատեանները
գտնում է, որ 467 ռ. դարձեալ մուտք չէ գրւած, և առաջարկում
է Յարութիւնեանին մուտք գրել և վճարել ուսուցիչների ուճիկը:

Աւելորդ չէր լինի յիշատակել այստեղ մի քանի փաստեր, ո-
րոնք լոյս են սփռում, թէ նախկին հոգաբարձութեան օրօք որքան
անհոգ և անփոյթ կերպով է տարւել դրամական հաշիւները:

Այսպէս օրինակ. — Մայիսի 12-ին 1912 թ. երևանի թեմական
Հոգաբարձութիւնը փոխադրում է փոստով Հոգ. անունով ի հաշիւ
Թայիրեանի կտակով դպրոցին հասանելիք նպաստի 250 ռ., որը
ինչպէս երևում է ժամանակին հաշւեմատեանում մուտք չէ գրւում:
Նոյն թւի հոկտ. 12-ին երևանում հոգաբարձու պ. Մ. Խանգաղեանը
Գերապատիւ փոխ-Թեմակալից ստանում է ի հաշիւ նոյն նպաստի
625 ռ. այդ գումարն էլ նոյնպէս չէ մտցւում հաշւեմատեան: Բայց
զարմանալին այն է, որ 625 ռ. ստանալուց 7-օր անց նախկին
Հոգ. մոռանալով այդ գումարի ստացման մասին և թէ 250 ռ. մա-
սին դիմում է նոյն թւի դեկտ. 19-ին մի գրութեամբ երևանի Թե-
մական Հոգ. պահանջելով նրանից այդ գումարը: Թեմական Հոգ.
գտնելով այդ պահանջը անհիմն, իբրև ապացոյց դրան ուղարկում է
մի գրութիւն № 129, 1913 թ. յունւ. 29-ին մի հաշւեցուցակի հետ,
որից պարզւում է այդ պահանջի անհիմն լինելը: Դրանից յետոյ
միայն նախկին Հոգ. զգալով իր սխալը հապճեպով մատեան է մըտ-
ցնում այդ գումարներն, այնպէս որ 250 ռ. ստացւած լինելով
1912 թ. մայիսի 12-ին գրւում է մատեանում 1913 թ. յունւարի
31-ին և յետոյ այդ գումարը ջնջւում է առանց բացատրութեան
ու նորից մուտք է գրւում 1912 թ. ապրիլի 31-ին (պէտք է ասել
որ ապրիլը 30 օր ունի): Տարօրինակ է և այն բանը, որ դեռ չըս-
տացւած փողը մուտք է գրւել մատեանում և այն էլ այնպիսի ամ-
սաթւով, որը գոյութիւն չունի օրացոյցում: Իսկ 625 ռ. ստացւած
լինելով 1912 թ. Հոկտ. 12-ին մուտք է գրւում մատեանում 1912
թ. նոյեմբերի 12-ին, մինչդեռ Յունւար, Փետրւար և Մարտ 1913
թ. ամսական իտոգներից և փոխանցումներից երևում է, որ այդ
625 ռ. մուտք գրւած չէ եղել մինչև Մարտի վերջը 1913 թ.:
Ուշադրութեան արժանի է այն, որ 625 ռ. ամբողջ կէս տարի
իսկ 250 ռ. ամբողջ 8 ամիս մնում է Յարութիւնեանի գրպա-
նում:

Յարութիւնեանը ստացել է 1913 թ. աշնանը տանուտէր Ռուս-
տամեանից ի հաշիւ կշեռքի կապալառու Դամբոյեանի 50 ռ., որը
յետագայում վճի առարկայ էր դարձել և պիտի լուծէր երդու-
մով: Յարութիւնեանը թէև եկեղեցի գնաց, բայց չ'երգւեց և հաջը
մնաց առանց որոշման: Յարութիւնեանի պաշտօնից հրաժարւելուց

յետոյ այդ 50 ո. հարցը նորից երևան եկաւ և պ. Ռուստամեանի բացատրութիւնից յետոյ միայն համաձայնեց Յարութիւնեանը, որ այդ 50 ո. ստացել է ինքը և յետոյ մտցրեց Հոգ. դրամարկը:

1913 թ. անդորրագրերից երևում է, որ ստացւած է թոշակադրամ 6 ո. իսկ հաշվեմատեանում գրւած է 4 ո.: Յետոյ նոյն մատեանում ելքի բաժնում միևնոյն ծախքերը երկու անգամ են գրւել 2 ո., 2. 80 կ., 9 ո. 90 կ. և 80 կ. ընդամենը 17 ո. 50 կ. և մատեանի հաշվեթերթերով 4 ո. աւելորդ, ուրեմն կասսայից պահւում էր 21 ո. 50 կ., որ պէտք է մանէր մատեանի մուտքի բաժնում: Այդ փողերը ներկայ հոգաբարձութեան օրօք միայն հնարաւոր եղաւ ստիպել Յարութիւնեանին մտցնել Հոգ. կասսան:

Առհասարակ մատեանները մեզ յանձնելիս վերին աստիճանի անխնամ էին և ունէին շատ ջնջւածքներ, քերածներ ու նոր գրւածներ: Վերև բերած փաստերից պարզ է, որ շնորհիւ նախկին Հոգ. կազմի անհոգութեան և անուշադիր վերաբերմունքի դէպի իր պարտականութիւններն, Յարութիւնեանը թոյլ է տւել իրան երկար ժամանակ ապօրէն կերպով իր գրպանում պահել (առանց մատեան մտցնելու) 1413 ո. 50 կ., որպիսի գումարը կորուստի չէ մատնւել միայն շնորհիւ պատահականութեան՝ այն—եթէ չստացւէր երևանի թեմական Հոգ. գրութիւնը № 129. իսկ Յարութիւնեանը ըստ սովորականի վճարելով ուսուցիչների ուժիկները և բարերար ձեռնանալով կը յայտնէր թէ այդ փողը իր գրպանիցն է տալիս:

Այստեղ արժէ արձանագրել պ. Յարութիւնեանի սխրագործութիւնը, որը կատարւել է ներկայ Հոգ. պաշտօնավարութեան առաջին տարում: 1913 թ. դեկտեմբերի վերջում, Յարութիւնեանը մատեանի ելքի բաժնում ցոյց է տալիս 50 ո. իբրեւ թէ վճարւած Մ. Արզումանեանին: Երբ Հոգ. Խորհուրդը Յարութիւնեանից պահանջում է բացատրութիւն և փաստաթուղթ, դա պատասխանում է, որ վաւերագրի կարիք չ'կայ, որովհետեւ այդ 50 ո. նախկին Հոգ. օրօք Արզումանեանից ստացած գրաւականն է և ինքը պարտական էր վերագրւել Արզումանեանին իբրև սպանդանոցի կապալառուի: Յարութիւնեանի բացատրութիւնը գտնելով անբաւարար, Հոգ. Խորհուրդը քննելով մատեանը և հարց ու փորձի ենթարկելով Արզումանեանին, պարզեց որ վերջինս իւր հաշիւները նախկին Հոգ. հետ

վերջացրած է եղել գեռ երկու տարի առաջ և 50 ո. անկանոն կերպով է ծախս ցոյց տւած. այդ պատճառով 50 ո. ջնջւեց ելքի բաժնից: Այդ գործողութիւնը Յարութիւնեանի վերջին «ժեստն էր» որ նոյնպէս յաջողութիւն չունեցաւ շնորհիւ այն բանի որ ամենամիտ մատեանները ենթարկւում էին ստուգման:

Բացի դրանից 1911 թ. ծառատնկութեան տօնից հանգանակւած 30 ո. կասայ չէր մտցւած և մինչև այսօր էլ այդ գումարից 11 ո. 80 կ. մնում է նախկին հոգաբարձու պ. Մ. Խանգաղեանի մօտ չ'նայած Հոգ. բազմիցս դիմումին: Նախկին Հոգ. օրօք օրկեսար կազմելու համար հանգանակւած է եղել 40 ո., որը մատեան չէ մտցւած և մինչև այսօր էլ հնարաւոր չեղաւ պարզել, թէ ում մօտ է գտնւում այդ փողը: 1911-12 թ. պիտոյքների վաճառումից հոյացած արդիւնքը 60 ո. և կազմատան առձեռն դրամագլուխը 17 ո. 22 կ. ընդամենը 77 ո. 22 կ. չէր մտցւած մատեան և գրւանւում էր աւագ-ուսուցիչ պ. Ամատունու մօտ: Այդ գումարն էլ ներկայ Հոգ. առաջարկութեամբ մտցւեց Հոգ. կասսան:

Այստեղ հարկաւոր է արձանագրել և այն, որ ըստ տեղեկագրի նախկին հոգաբարձ. անցեալ եռամեակում դպրոցական դրամագլուխից տոկոս է ըստացել 6000 ոսկւ. այսինքն տարեկան 2000 ո. եկեղեցին նոյն ժամանակում արդիւնք է տւել 2000 ո. աւելի, այսինքն տարեկան 700 ո.: Այդ գումարները փրօն և ճիշտ չեն կարող լինել, որովհետեւ մուրհակներից ստացւած տոկոսները ճշտապէս ստուգւած չեն եղել և հաւանականօրէն անձեռնմխելի գումարից վերջիշւած ծախսւած 3243 ո. 42 կ ընդունւել է տոկոսի տեղ: Այնպէս որ եթէ անձեռնմխելի գումարից ծախսւած 3243 ո. 42 կ. դուրս դանք 6000 ոսկւուց կը մնայ 2756 ո. 58 կ. սրանից պարզ է, որ տարեկան տոկոս ստացւել է ոչ թէ 2000 ո. այլ 918 ո. 86 կ.

Ահա այսպիսի խառն դրութեան մէջ էր գտնւում նախկին Հոգ. դրամական հաշիւները երբ նոր Հոգ. պաշտօնի անցաւ պէտք է և նախահաշիւը կազմեր: Հոգ. Խորհուրդը, հնարաւորութիւն չունենալով կազմել նախահաշիւը առանց հաստատուն ծանօթութեան ստացւելիք եկամուտի հետ և ձեռքի տակ չունենալով փաստական տրւեալներ դրամագլխի մասին, ստիպւած էր ղեկավարւել նախկին

Հոգ. տեղեկագրի տւեալներով և երեցփոխան Յարութիւնեանի տրւած բանաւոր տեղեկութիւններով, որոնք ինչպէս պարզեց յետագայում, չէին համապատասխանում ճշմարտութեանը և ունեցան այն հետեանքը, որ այդպիսի տւեալների վրայ հիմնւած նախահաշիւը առաջին տարում տւեց մի խոշոր գէֆիցիտ, որը ծածկելու համար արւեց փոխառութիւն պ. Ս. Մուրադեանից 500 ո. և երեւանի թեմական կոնսիստորիայից 1000 ո.

Նախկին Հոգ. դպրոցական հաշիւները անցեալ 1909-1912 թ. եռամեակում փակել է 1912 թ. սեպտեմբերի 1-ին ինչպէս գեղուցում է տեղեկագիրը. իսկ սեպ. 1-ից մինչև պաշտօնից հեռանալը. — այն է ց 1-ն Մայիսի 1913 թ. ոչ մի հաշիւ չէ տւել և խորհուրդաթէև պաշտօնի է մտել մայիսի 6-ին, բայց և այնպէս հարկադրւած է ներկայացնել և նախորդ Հոգ. 8 ամսեայ գրամական հաշիւները: 1912 թ. Սեպտեմբ. 1-ից ց' 1-ն մայիսի 1913 թ. նախկին Հոգ. մուտք է ունեցել 4519 ո. 29 կ, իսկ ելք 4794 ո. 38 կ. ուրեմն գեֆիցիտ է ունեցել 275 ո. 09 կ., որը ծածկել է ներկայ Հոգ.: Հոգաբարձութեանս նոյնպէս վճարել է նախկին Հոգ. պարտքեր. — հին պարտք 50 ո. 08 կ., Վանքեանին 37 ո. 24 կ., Շահգեալ-դեանին 36 ո. 66 կ., և Ափինեանի տպարանին 49 ո. ուրեմն ներկայ Հոգ. լրացրել է բացը և տւել է իր նախորդի պարտքեր ընդամենը 448 ո. 57 կ.:

Ամեն տարի մօտ 7-8 հազար ուրբու հասնող դպրոցական ծախսը ծածկելու համար Սորհուրդս ձգտել է, որքան հնարաւոր է իր եռամսեայ գործունէութեան ընթացքում ընդարձակել և կարգի բերել եկամտային աղբիւրները, աշխատելով մուրհակներով տւած փողերը վերածել անշարժ կայքի, որ աւելի շահաւէտ է քան թէ մուրհակներից տոկոսներ ստանալը, որոնց գանձումը շատ անգամ հանդիպում է դժարութիւնների. պարտապանների չքաւորութեան պատճառով: Ներկայ Հոգ., ինչպէս վերև յիշեցինք, կարդաւորելով ուսումնական վարձով արւելու հարցը ապահովեց դպրոցը տարեկան 600 ո. եկամուտով: Հին դպրոցական շէնքը, որ ամեն տարի չնչին եկամուտ էր բերում, Հոգ. օրօք վարձով արւեց աւելի ձեռնառու պայմանով, — այն է Սորհուրդս բանակցութեան մէջ մտնելով տեղիս աւուսի վարչութեան հետ, համաձայնութիւն կայացրեց վերջինիս

հետ և 4 տարի վարձով տւեց, պայմանաւորւելով տարեկան 300 ո. և պարտաւորեցնելով բոլոր պահանջւելիք նորոգութիւններն և փոփոխութիւնները կատարել աւուսիի հաշւով: Այսպէս պարտաւորութիւն է զգում Հոգ. մատնանշել այն ուրախալի և շնորհակալութեան արժանի երևոյթի վրայ, որ աւուսիի խորհրդի անդամները ի նկատի ունենալով դպրոցի շահը, մեծ պատրաստակամութեամբ ընդունեցին վերոյիշեալ առաջարկը և աւուսիի հաշւով վերանորոգեցին շէնքի ներսը, որով բարձրացրին շէնքի արժէքը, որպիսի շէնքի վրայ աւուսիի վարչութիւնը ծախսել է մօտաւորապէս 900 ո.:

Նոյն Հոգ. օրօք գնեց եկեղեցապատկան հողի վրայ կառուցւած Վ. Նալբանդեանի խանութը, որ տարեկան հիմա բերում է 120 ո. մինչդեռ այն ժամանակ գետնի համար ստացւում էր 30 ո. Նոյնպէս գնւած է Ասատուր Պետրոսեանի խանութի կէտը, որ ենթարկւած է զինւորական վարչութեան կողմից բեկվիզիցիայի և դեռ որոշւած չէ կառուարմամբ:

Նոյնպէս վարձով է տրւած դպրոցական շէնքը 3500 ո., մինչև Սեպտեմբերի 1-ը 1916 թ., պայման դեռ չէ կուել զինւորական վարչութեան ձգձգումների շնորհիւ:

Ի նկատի ունենալով դպրոցի ֆինանսական նեղ դրութիւնը և դրանից առաջացած նիւթական ճգնաժամը, Սորհուրդս մի քանի անգամ արտակարգ նիստ ունեցաւ, հրաւիրելով նոյնպէս և հառաքակութեան բանիմաց անձնաւորութիւններին շատերին և խորհրդակցելով նրանց հետ այն բանի մասին, թէ ինչ միջոցաւ հնարաւոր է ապագայում խուսափել գեֆիցիտից և աւելացնել դպրոցի նիւթականը:

Առաջարկեցին հասարակական տուրքի աւելցում, անասնապահներից տուրք վեր առնել և դպրոցի աշակերտներից թոշակ պահանջել:

Չնայելով որ այդ հարցերը շատ ծեծեցին նոյնիսկ ծխական ժողովում, բայց և այնպէս ժողովականները ոչ մի դրական եզրակացութեան չը յանգեցին առաջին երկու հարցերի վերաբերմամբ, այնպէս որ հնարաւոր եղաւ անցկացնել թոշակի գանձման հարցը, որ գործադրւում է և հիմա, տալով տարեկան 1015 ո. 80 կ.:

Հոգ. ջանքերով հնարաւոր եղաւ ստանալ պ Աւետիս Միրզոյեանից

ի յիշատակ նրա հանգուցեալ կնոջ 6 տարի ժամանակով նրա երկու կրպակը, որոնց տարեկան վարձը 152 ռ. մտնում է դպրոցական կասսան:

Ուրեմն դպրոցը 1913—16 ուս. եռամեակում պահել է հետևեալ աղբիւրների մուտքով:

	Ռուբ.	Կոպ.
1) Մուրհակներից	6580	59
2) Սպանդանոցից ² և կշեռքից	1466	60
3) Թոշակներից	2386	75
4) Եկեղեցական մուտքից	831	18
5) Մոմավաճառումից	2371	85
6) Անշարժ կայքերից	3870	40
7) Նւէրներ	4347	—
8) Մոմի կապալից	584	88
9) Թայիրեան կտակից	4342	18
10) Ներկայացումներից	1139	59
11) Հասարակական տուրքից	3095	55
12) Դեղեանից	800	06
13) 500 ռ. փոխառութիւն %օով և ձեռաց փող պ. Լ. Զոհրաբեանից	2275	—
14) Այլ և այլ եկամուտներ	936	68
ԸՆԴԱՄԵՆԸ	35028	31

Եթէ համեմատենք 1909—1912 եռամեակի մուտքի գումարը, որ հասնում է 23283 ռ. 14 կ., 1913—1916 եռամեակի մուտքի գումարի հետ, աչքի է ընկնում, որ վերջինս մէկ ու կէս անգամ առաջինից աւել է:

Նախկին Հոգ. ըստ տեղեկագրի ունեցել է մուտք դրամով.— 23283 ռ. 14 կ., ներկայ Հոգ.— 35028 ռ. 31 կ.:

Ինչպէս վերև ապացուցեց ներկայ Հոգ., իւր պաշտօնը ստանձնելու ժամանակ, իր նախորդէից մուրհակներով և կատարողական

թերթերով նոյնպէս և պ. Ս. Եղիգարեանի նւիրած 2000 ռ. հաշւելով, պէտք է ստանար 18853 ռ. 65 կ., բայց դրա փոխարէն ստացել է 15610 ռ. 33 կ. եթէ դրանից դուրս գանք և այն 275 ռ. 09 կոպ. բացը, որ գոյացել էր հին Հոգ. օրօք 1912 թ. սեպտ. 1-ից 1913 թ. Մայիսի 1-ը և նոյն Հոգ. չը վճարած պարտք. 183 ռ., որը վճարեց խորհուրդս, այն ժամանակ պարզ կլինի, որ խորհուրդս իրօք ստացել է 15151 ռ. 26 կոպ. անձեռնմխելի դրամագլուխ: Ուրեմն դրամագլխից պակասում էր 3702 ռ. 39 կոպ.:

Մեր օրօք դրամագլխից ծախսւած է 5130 ռ. 13 կ. բայց դրա փոխարէն Հոգ. վճարել է ակումբի շէնքի կառուցման համար 3345 ռ., կշեռքի վրա ծախսել է 340 ռ. 90 կ., նոյնպէս գնել է եկեղեցապատկան հողի վրայ կառուցւած Ն. Նալբանդեանի խանութը 430 ռ. և Ս. Պետրոսեանի խանութի կէտը 450 ռ. ընդամենը ծախսւած է 4565 ռ. 90 կ.: Նոյնպէս վերադարձրել է ակումբի մուրհակները գումարաւ 1613 ռ. 75 կ. իսկ նախկին Հոգ. զործադրելով անձեռնմխելի դրամագլխից 3243 ռ. 32 կ. դպրոցական ընթացիկ ծախսերը ծածկելու համար պակասեցրել է դպրոցական եկամուտների աղբիւրը, որով մեծապէս վնասել է դպրոցական շահերին:

Վերոյիշեալից պարզ է, որ առ 1-ն Յուլիս 1916 թ. մուրհակներով և կատարողական թերթերով անձեռնմխելի դրամագլուխը հասնում է 10021 ռ. 13 կ.:

Մուրհակների համար պէտք է ասել, որ 4 մուրհակ նախկին երեցփոխ Յարութիւնեանի անունիցն է. իսկ պարտապաններն են Մ. Շարբաթեան, Ռուբէն Իսրայէլեան, Ղազար Դաւթեան և Գէորգ Աղաբաբեան, որոնցից Շարբաթեանը պարտ է 50 ռ. և հրաժարւում է վճարել, պատճառաբանելով թէ նա պարտք է եղել ոչ թէ եկեղեցուն, այլ Յարութիւնեանին, որին արդէն 50 ռ. վճարել է, միայն թիւրիմացութեամբ մուրհակը չէ վերադարձւած: Միւս երեքը նոյնպէս հրաժարւում են վճարել, յայտնելով, որ նրանք պարտաւոր էին քար բերել դպրոցական շէնքի կառուցման համար և այդ քարերը յանձնել են ում հարկն է, այնպէս որ իրանց պարտականութիւնը կատարել են և իրենցից 45 ռ. 50 կ. քարերի արժեքի պահանջը անհիմն է: Ահա իրողութիւնը իրա մերկութեամբ,

մնում է արդոյ ծխականներից լսելու պ. Յարութիւնեանի բացատրութիւնը:

Կան ևս 218 ու. բարաթներ (մուրհակներ), որոնց վաղիմուծիւնը շուտուց անցել է և պարտապանները ոչ մի տրամադրութիւն չեն ցոյց տալիս վճարելու, առարկելով, փողերը վաղուց վերադարձւած են ուրիշ ճանապարհով:

Իսկ մէկ մուրհակով էլ պ Ա. Եղիգարեանը պէտք է վճարէ 220 ու., որպիսի գումար իրօք Տէր-Արսէնի պարտքն է, ինչպէս հաստատում է վկաներով, նոյն իսկ Տէր-Արսէնի ընտանիքը ընդունում է, որ իրենց պարտքն է, այնպէս որ Հոգ. յիշեալ ընտանիքին հասանելիք թոշակից արդէն դուրս է եկել այդ 220 ու. ուստի անհրաժեշտ է մուրհակը վերադարձնել պ. Եղիգարեանին, որի համար հարկաւոր է ձեր որոշումը:

Անցնելով ելեմտից հաշուկշտին, պէտք է ասել, որ 1913 թ. Մայիսի 1-ից մինչև Յուլիսի 1-ը 1916 թ. Հոգաբարձութիւնս

- 1) Մուտք է ունեցել դրամով 35028 ու. 31 կ.
- 2) Մուրհակներ ունի գումարաւ 10021 ու. 13 կ.

ԸՆԴԱՄԵՆԸ 45049 ու. 44 կ.

Նոյն ժամանակամիջոցում խորհուրդս

- 1) Դրամով ծախս է ունեցել 34542 ու. 48 կ.
- 2) Մուրհակներով աւած է շահեցողութեան 10021 ու. 13 կ.

ԸՆԴԱՄԵՆԸ 44563 ու. 61 կ.

Արդ դուրս գալով 45049 ու. 44 կ. մուտքի գումարից 44563 ու. 61 կ. ելքի գումարը առ 1-ն Յուլիսի 1916 թ. կասսայում կ'մնայ առձեռն դրամ 485 ու. 83 կ.:—Բացի դա Հոգ. Խորհուրդս առ 1-ն Յուլիսի 1916 թ. ունի ստանալիք.—

- 1) Հասարակական տուրքից 1100 ու. — կ.
- 2) Հանդուցեալ Ն. Թայրեանի կտակից 500 ,, — ,,
- 3) Մ. Արզումանեանից 67 ,, — ,,
- 4) Մ. Չատինեանից 11 ,, — ,,
- 5) Ա. Ռոստոմեանից 70 ,, — ,,
- 6) Իգնատ Ամիրբէգեանից 40 ,, — ,,
- 7) Մ. Իսահակեանից 100 ,, — ,,

- 8) Տրւած է ոսճիկ աւանսով 99 ու. — կ.
- 9) Գէորգ Միրզայեանից 25 ,, — ,,
- 10) Յ. Յակոբեանից 8 ,, — ,,
- 11) Մ. Խանգազեանից 11 ,, 80 ,,
- 12) Խոտատեղից 50 ,, — ,,
- 13) Մումի տւած է 21 ,, — ,,
- 14) Զինուորական վարչութիւնից 3500 ,, — ,,

ԸՆԴԱՄԵՆԸ 5602 ու. 80 կ.

Որը դրամարկղի առձեռն գումարի հետ կը կազմի—6088 ու. 63 կ. բացի դա՝ հոգաբարձութիւնս ունի ստանալու լուծված շինարարական յանձնախմբից մօտ 450 փութ կիր, որը մինչև օրս չէ յանձնել հոգաբարձութեանս յիշեալ յանձնախմբի նախագահ պ. Յարութիւնեանը.

Գալով դպրոցական կեանքին, պէտք է ասել, որ նա Հոգ. պաշտօնավարութեան առաջին տարում անցաւ ոչ խաղաղ, շնորհիւ նախկին ուսուցչական կազմի անթոյլատրելի վարմունքից:

Ինչպէս մի քանի անգամ կրկնել ենք վերևում, դպրոցական դրամական հաշիւների խառնաշփոթութեանը և մուրհակների չը ճշաւած լինելուն, ստեղծւեց այնպիսի դրութիւն, որ առաջին տարում, կազմւած նախահաշիւը տեց խոշոր գեֆիցիտ, առաջացնելով դրամական ճգնաժամ, որին նպաստեց նոյնպէս մի քանի անձնաւորութիւնների անպարտաճանաչութիւնը՝ օր. նախկին տանուտէրը ծխական տուրքից հասանելիք 1000 ու. չէր մտցրել Հոգ. կասսան, նոյն անձնաւորութիւնը ըստ խոստման չը գանձեց խոտատեղից հասանելիք 50 ու. և իբրև սպանդանոցի կապալառու չէր վճարել 70 ու.: Նախկին երեցփոխ Յարութիւնեանի մօտ մնում էր մօտաւորապէս 80 ու. (որը հիմա արդեն վճարւած է) ծառասնկութեան ժամանակ հանդանակած 20 ու. (որից մինչև այսօր չի մըտցւած կասսան 11 ու. 80 կ.) և ներկայացումներից մնացած 24 ու. չէր մտցւած դրամարկղը: Բացի դրանից ոչ սակաւ նպաստեց այդ ճգնաժամին այն բանը, որ երեցփոխ Յարութիւնեանը 1914 թ. Յունւարի սկզբին հրամարական ներկայացնելով գերապատիւ փոխ-

թեմակալին և մօտաւորապէս երեք ամիս փաստօրէն չկատարելով իւր պարտականութիւնները, մեծ խոչընդոտ հանդիսացաւ դպրոցիս հասանելիք եկամուտների գանձման: Յիշեալ Յարութիւնեանի այդօրինակ գործելակերպը ուժեղ կերպով անդրադառնալով դպրոցի տնտեսականի վրա, միեւնոյն ժամանակ հող պատրաստեց այն անցանկալի անախորժութիւնների համար, որոնք տեղի ունեցան Հոգ. Խորհրդի և ուսուցչական կազմի մէջ: Ահա շնորհիւ վերոյիշեալ հանգամանքների ստեղծեց այնպիսի դրամական դրութիւն, որ ուսուցչութեան ուժիկների բաշխումը չէր կարող կատարւել կանոնաւոր կերպով, որը միայն առիթ եղաւ ուսուցչութեան համար դիմել խորհրդիս անհանդուրժելի և ուսուցչութեան համար ոչ պատւաբեր քայլի. առաջարկելով փակել դպրոցը կամ վճարել ուժիկը: Հոգ. հաւատացած էր, որ ուժիկը չէր, որ ուսուցչութեանը մղում էր դէպի այդ այլ դրս պատուր ուրիշ էր, և այդ հաստատւում է այն բանով, որ ~~իր~~ անախորժական դրութիւն ստեղծող Յարութիւնեանը, որին հովանաւորում էին ուսուցիչները, դեռ չէր հեռացել երեցփոխի պաշտօնից, ուսուցչութիւնը լուծեամբ տանում էր այդ մարդու ստեղծած դրութիւնը. իսկ երբ յիշեալ Յարութիւնեանի հրաժարականի ընդունելը կատարւած փաստ դարձաւ (ուրեմն ուսուցիչների սպասելիքը ֆիասկօ կրեց), այն ժամանակ այդ բանը կարծես մի տեսակ ազդանշան եղաւ ուսուցչութեան համար, որը քիչ սպասելուց յետոյ դիմեց վերոյիշեալ անհանդուրժելի քայլին:

Հոգ. Խորհրդի բուն ցանկութիւնն էր յայտագործել ուսուցչութեան այդ քայլի բուն պատճառը, որը երևան հանելու համար պ. Յ. Խանգաղեանի առաջարկութեամբ 1914 թ. կայացած ծխական ժողովը, որի նախագահն էր հենց ինքը պ. Յ. Խանգաղեանը, ընտրեց մի յանձնախումբ, պարտաւորեցնելով նրան կարճ ժամանակում պարզել Հոգարարական և ուսուցչական կազմերի մէջ պատահած միջնադէպի իսկական պատճառը: Ցաւելով պէտք է ասել, որ մինչև այսօր էլ յայտնի չէ, թէ ինչ է արել այդ ուղղութեամբ յիշեալ յանձնախումբը. դուցէ վերջինիս անդամներից որ և է մէկը այստեղ է և հնարաւոր կը գտնի բացատրութիւն տալ դրա մասին:

Այդ միջնադէպի հետեւանքն եղաւ այն, որ ուսուցչական ամբողջ խումբը ուսումնական տարւայ վերջին ինքնակամ հրաժարւեց պաշտօնավարելուց, դրանով Հոգ. հանեց անախորժ դրութիւնից և հնարաւորութիւն տւեց նրան հեշտութեամբ նոր ուսուցչական կազմ հրաւիրել, որ մինչև օրս էլ պաշտօնավարում է աննշան փոփոխութեամբ: Պէտք է արձանագրել այն փաստը, որ վերջին երկու տարւայ ընթացքում դպրոցական կեանքը չէ աղմկել և ընթացել է համեմատաբար խաղաղ և առանց ցնցումների, բացառութեամբ մի անախորժ դէպքի, որի պատճառով Խորհուրդս ստիպւած էր դիմել խիստ միջոցի մի դատաւար վերաբերմամբ, որ մեղանչել էր թէ կարգապահութեան և թէ մանկավարժութեան դէմ:

Երկու տարւայ ընթացքում, նախահաշիւը, հիմնւած լինելով որոշ չափով ճիշտ տւեալների վրայ, չը տւեց խոշոր բաց. այդ բանի շնորհիւ ուսուցչութեան ուժիկները բաշխումը կատարւում էր համեմատաբար կանոնաւոր կերպով: Խորհուրդս պարտք է զգում յիշատակել, որ կատարւում դրամի բացակայութեան դէպքում, երեցփոխ պ. Լ. Զուրաբեանը, շնորհակալութեան արժանի պատրաստականութեամբ յաճախ ուսուցիչների ուժիկի բաշխումը կատարել է իր սեպհականից: Զը նայած որ դպրոցի դրամական դրութիւնը այնքան էլ նախանձելի չէ, բայց և այնպէս խորհուրդս 1915-16 ուսումն տարում հնարաւոր գտաւ 20 ո. դատագիրը հասցնել 22 ո. և տալ ուսուցչութեանը նպաստ մի ամսւայ ուժիկի չափով, որի կէսը արդէն վճարւած է: Խորհուրդս գիտակցում է, որ այդ մի չնչին յաւելում է որովհետեւ արդի դժնդակ պայմանները և կենսական միջոցների առատելական չափի հառած թանգութիւնը ամենածանր կերպով ճնշում է գլխաւորապէս ուսուցիչներին, որոնց ուժիկի չնչին լինելը նոյնպէս առատելական պէտք է համարել, բայց և այնպէս վերե յիշած պատճառով Խորհուրդս չէր կարող աւելին անել: Շատ հասկանալի է, որ այդպիսի չնչին ուժիկով ուսուցիչները հնարաւորութիւն չունին բուարար անունը ոտանայ և ենթակայ են գրկանքի, որը փաստակար կերպով անդրադառնալով նրանց ֆիզիքականի և հոգեկանի վրայ, անպայման կուտենայ իր անբարեյաջող ազդեցութիւնը ուսուցչի դասաւանդութեան բեղմնաւորութեան վրայ: Հէնց այդ տեսակէտից նայելով

հարցի վրայ, էլ չենք խօսում մարդասիրութեան մասին, յարգելի ծխականները պէտք է միջոցներ ձեռք առնեն ուսուցիչներին նիւթականը բաւարարելու, որպէսզի նրանք հնարաւորութիւն ունենան հանգիստ և առանց ջղայնութեան զբաղել երեխաների կրթութեամբ և նւիրել այդ սուրբ գործին: Պէտք է հասկանալ, որ դպրոցական գործ չի կարելի հիմնել պատահական եկամուտների և մուրացկանութեան վրայ: Թէ ինչ միջոցներով կարելի է այդ նպատակին հասնել, այդ ծխականներից լաւ յայտնի է, որովհետև անցեալում այդ հարցի քննութեանը նւիրւած են եղել մի քանի նիստեր և առաջարկել են միջոցներ, որոնք կարող են դպրոցի ֆինանսական գրութիւնը բարձրացնել, աւելի հաստատուն հողի վրայ դնել: Արդ՝ ծխականներից հարկաւոր է բարի ցանկութիւն և ուշադիր վերաբերմունք դէպի ներկայ սերունդի դաստիարակները: Ուսուցիչներն են, որոնք իրանց անտեսանելի գործողութեամբ կուլտուրական արժէքներ են ստեղծում և այդ արժէքներով մենք պարծենում ենք: Ուստի անհրաժեշտ է խրախուսել և վարձատրել ըստ արժանւոյն այդ վաստակաւորներին, որոնք ջանք չեն խնայում լոյս և գիտութիւն տարածելու ժողովրդի մէջ:

Հոգաբարձական խորհուրդը չէ կարող լուծեամբ անցնել և չարտայայտել իր ուրախութիւնը այն կուլտուրական տօնի առիթով, որ տեղի ունեցաւ դպրոցում սոյն թւի Մայիսի 22-ին Հոգաբարձական և մանկավարժական կազմերի համերաշխ գործակցութեամբ: Ի հարկէ ծխականներից համար պարզ է, որ խօսքը վերաբերում է արժանապատիւ Հայր Տէր-Սորէնի 40 ամեայ գլխաւոր և բեղմնաւոր մանկավարժական գործունէութեանը: Տէր-Սորէն հայրը, մանկավարժական ասպարէզում գործող առաջին ռահվիրաներիցն է և իր գործունէութիւնը սկսելով աւելի վատթար պայմաններում, առանց վհատելու և անշեղ ընթանալով իր նախագծած ուղիով, մինչև այսօր էլ պահպանել է համոզմունքների իդէալական թարմութիւն: Այդ կուլտուրական տօնը, որ կատարւեց առաջին անգամ զիւղական միջավայրում, իսկապէս Ղարաբլինցիների կուլտուրական հասունութեան քննութիւնն էր և ուրախութեամբ պէտք է արձանագրել, որ տեղացիները բաւական յաջող կերպով տւին այդ քննութիւնը:

Վերջացնելով տեղեկագիրը, Հոգաբարձական խորհուրդը պարտք է համարում ասել, որ նա իր զեկուցումը կազմել է «Առանց զայրոյթի և աշտուրեան», ցանկանալով տալ մերկ փաստեր, որի հիման վրայ արդոյ ժողովականները հնարաւորութիւն կունենաք հասկացողութիւն կազմել և համեմատել ներկայ և նախկին Հոգաբարձութեան գործունէութիւնը դպրոցական պատասխանատու գործում: Պէտք է աւելացնել, որ այս տեղեկագրի տւեալները հիմնւած են նախկին և ներկայ հաշւետեսների զեկուցման վրայ:

Հոգ. անհրաժեշտութիւն է զգուժ ներկայ հաշւետեսների զեկուցումից բերել, առանց մեկնաբանութեան հետեւալ հատւածը. — «2 է կարելի առանց ուշադրութեան թողնել ներկայ երեցփոխան պ. Լ. Զուրաբեանի դէպի եկեղեցին և դպրոցը ունեցած ջանքը, որը երեւում է մոմավաճառութիւնից: Համեմատած առաջւայ մոմավաճառութեան հետ ներկայինիս եկամուտը քառապատկել է: Ինչպէս երեւաց հաշիւներից՝ ուսուցիչների ռոճիկները լրացնելու համար երեցփոխանը յատկացրել է իր միջոցներից մօտաւորապէս 2000 ո. առանց 0/0: Հոգաբարձութեան կազմը, կարող ենք ասել, ամեն ամիս, բացի հերթական նիստերից, հետաքրքրւել է և մանրամասնօրէն փակել է ամեն ամսւայ հաշիւները ճշտօրէն, որոնց համար պէտք է յայտնել մեր շնորհակալութիւնը»:

Հոգաբարձական արդի կազմը բաղկացած է հետեւեալ անձերից՝


- 1) Բժ. Արմենակ Վարդանեան. — Նախագահ Հոգ. խորհրդի
- 2) Գէորգ Նալբանդեան. — Ծախսարար
- 3) Լևոն Զուրաբեան. — երեցփոխ և գանձապահ
- 4) Ասատուր Մխիթարեան
- 5) Սամսոն Լոռեան:

1913—1916 ուս. եռամեակի ընթացքում Հոգ. կազմի մէջ եղել են փոփոխութիւններ. այն է՝ — Վ. Նալբանդեանի տեղ, որը հաշւապահ էր, հրաւիրւեց Ա. Մխիթարեանը: Յ. Յարութիւնեանի տեղ, որը երեցփոխ էր, ընտրւեց Լ. Զուրաբեանը: Ա. Աղաբաբեանի տեղ, որը ծախսարար էր, հրաւիրւեց Ս. Լոռեանը: Քարտու-

դարութեան պաշտօն կատարել են նախկին և ներկայ աւագ-ու-
սուցիչները. Հ. Ամատունին և Վ. Տէր-Սաշատրեանը:

Սորնուրդս եռամեակի ընթացքում ունեցել է 165 պաշտօնա-
կան նիստեր արձանագրութիւններով:

Մ. Զարեգյան, Գրեմի Երեմյան, Բ. Բ.



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014984

